



□□□□□□ □□□□□□□□

Ծնվել է 1949թ օգոստոսի 5-ին Մարտակերտի Լյուլասազ գյուղում: Տեղի դպրոցում ստացել է 8-ամյա կրթություն , այնուհետև Մուղավազ գյուղում ավարտել է միջնակարգ դպրոցը: Ծառայել է Խորհրդային Բանակում` Գերմանիայում: Շարժման սկզբից մեկնել է Ղարաբաղ, մասնակցել է Մարտակերտի շրջանի գյուղերի պաշտպանության համար մղված մարտերին: Զոհվել է 1992թ օգոստոսի 8-ին Մարտակերտի Մուղավազ գյուղի ազատագրման ժամանակ: Ունի 2 դուստր , 1 որդի և 5 թոռ: ՀՀ նախագահի հրամանագրով Ռայնիս Բեջանյանը հետմահու պարգևատրվել է արիության մեդալով: Հուղարկավորված է հայրենի Լյուլասազ գյուղի դպրոցի բակում կառուցված հուշարձանում: